ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

19 .12.2015թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/
Քարտուղար Ա. Սարիբեկյան/քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Վ. Առաքելյանը, Լ. Մելիքջանյանը, Հ. Ղահրամանյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը և Հ. Քարտաշյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Լսել դեկանի ամփոփ հաշվետվությունը:
/Զեկ Ն. Խուդավերդյան/

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին -Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ 2011 թվականի մայիսի 10-ին ընտրվել է «Տնտեսագիտության» ֆակուլտետի դեկան և ստանձնել այդ բարձ պատասխանատվությունը:

Ֆակուլտետը լինելով տարածաշրջանի միակ պետական տնտեսագիտական հոսքի մասնագիտական կրթօջախ, իր առաքելությունն է համարում երիտասարդ սերնդին գիտամշակութային, բազմակողմանիորեն մասնագիտական ուղղվածության զարգացման, աշխատաշուկայում արդի պահանջներին համապատասխան մասնագետների և հիմնարար արժեքների ապահովումը: Այն առանձնապես կարևոր նշանակություն ունի նաև մեր տարածաշրջանը մրցունակ և համալիր կոմպետենցիաների տիրապետող տնտեսագետ կադրերով ապահովելու առումով:

Որակյալ կրթություն ապահովելու հետ մեկտեղ ֆակուլտետի գործունեության կարևորագույն խնդիրն է նաև ուսանողակենտրոն միջավայրի հաստատումը՝ հարատև կրթության ռազմավարությունը:

Այսպիսով ելնելով այն հանգամանքից, որ ըստ ֆակուլտետի կանոնադրության պահանջի իր ավարտին է մոտենում դեկանի պաշտոնավարման ժամանակահատվածը, ինչպես նաև 2011-2015 թթ. նախատեսված ռազմավարության իրականացման գործընթացը, նա ներկայացրեց նշված ժամանակահատվածի շրջանակներում ֆակուլտետի գործունեության 'կատարված աշխատանքները** վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ուսումնական գործընթացի կազմակերպումը իրականացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ռազմավարական ծրագրին համահունչ, իսկ ֆակուլտետի ամենամյա աշխատանքները պլանավորվել են ռազմավարական ծրագրի անբաժան մաս կազմող ժամանակացույց - պլանի համապատասխան:

Ինչպես հայտնի է ԵՊՀ Իմ տնտեսագիտության ֆակուլտետը իր առաքելությունը իրականացնում է երկու՝ «Տնտեսագիտության տեսություն» և «Սերվիս» մասնագիտությունների գծով համապատասխան մասնագիտական «Ընդհանուր տնտեսագիտություն» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների միջոցով:

Ֆակուլտետի գործունեության ուղղվածության հիմքը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են ԵՊՀ Իմ ռազմավարական ծրագրի հիմնադրույթները, որն իր մեջ ներառում է բարձր չափորոշիչներ՝ բարձրորակ և հարատև կրթության ապահովում, գիտական հետազոտությունների և նորարարությունների ակտիվացում, կրեդիտային համակարգի կիրառության ապահովում, հանրային ներգրավում և ծառայություններ, որակյալ կադրային ներուժի ձևավորում:

Ֆակուլտետի խորհուրդը՝ որպես կառավարման մարմին ամբիոնների հետ հատեղ աշխատանքներ է տարել ռազմավարական ծրագի և իր լիազորությունների շրջանակներում վերոհիշյալ խնդիրների իրագործման ուղղությամբ:

Առաջին հերթին ֆակուլտետում գործող մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվել են կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ՝ ժամանակակից ծրագրային չափանիշների պահանջներին համապատասխան:

Ֆակուլտետում մշտապես ուշադրության կենտրոնում են պահվում կրթության որակի ապահովման ժամանակակից պահանջները՝ բարձրորակ կրթության ապահովման նպատակով: Նշված խնդրի լուծմամբ հիմնականում զբաղվում են մասնագիտական ամբիոնները, որոնք միաժամանակ իրականացնում են

պրոֆեսորադասախոսական անձնակազմի արդյունավետ համալրման, և մասնագիտական որակի հետ կապված անհրաժեշտ քաղաքականության մշակումն ու իրագործումը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնների կողմից վերանայվել և արդիականացվել են՝ առարկայական ծրագրերը, դասընթացների բովանդակությունը, վերջնարդյունքների գնահատման չափանիշները: Եվ այս ամենի արդյունքում ստեղծվել են առարկայական փաթեթներ, որոնք առավել պլանվորված և վերահսկելի են դարձնել ուսումնական գործընթացը նպաստելով կրթության որակի բարձրացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում իրականացվող գրեթե բոլոր գործընթացներում ապահովվել է տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը:

Ֆակուլտետում ձևավորվել է առցանց լսարան և ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած լաբորատորիա, միաժամանակ նշեմ, որ մեծացել է դասավանդման ընթացքում նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառող դասախոսների տեսակարար կշիռը: Եվ այս ամենը նպաստել է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ինչի մասին էլ վկայում են ուսանողների շրջանում պարբերաբար անցկացված դասավանդման որակի և արդյունավետության վերբերյալ ուսանողական հարցման դինամիկ աճող գնահատականները:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում գրանցվել է նաև գիտական կյանքի զգալի աշխուժացում: Երկու ամբիոնների դասախոսների կողմից վերջին հինգ տարվա ընթացքում զգալիորեն ավելացել է տպագրված հոդվածների, զեկուցման թեզիսների, մենագրությունների և ձեռնարկների թիվը, պաշտպանվել է մեկ դոկտորական և մեկ թեկնածուական թեզ:

Բարձրորակ կրթության ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացման ընթացքում ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումները սերտորեն համագործակցել են Որակի ապահովման բաժնի հետ:

Ֆակուլտետում ներքին համատեղությամբ աշխատող որոշ դասախոսներ պարբերաբար մասնագիտական ստարժավորում են անցնում արտասահմանյան ԲՈՒՀ -ում և գիտահետազոտական կազմակերպություններում և ձեռք բերած փորձը ակտիվորեն ներ են դնում նաև մեր ֆակուլտետի երկու մասնագիտությունների գծով իրականացվող ուսումնական գործընթացներում: Ֆակուլտետում գիտական հետազոտությունների և նորարարությունների ակտիվացման առումով կարևոր եմ համարում նշել նաև այն, որ « Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի երկու աշխատակիցներ մասնակցել են «Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում»

միջազգային դրամաշնորհային ծրագրին: Եվ, որ ծրագրի շրջանակներում նախաավարտական պրակտիկա է անցել ֆակուլտետի թվով վեց ուսանողներ ու ստացել համապատասխան վկայագիր: Կոլեկտիվ հետազոտության արդյունքներն ամփոփվել են մենագրության ձևով: Տվյալ ամբիոնի նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ կազմակերպվել է հանրապետական նշանակության գիտագործնական կոնֆերանս «Բուհերի կառավարման համակարգի բարելավման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով, որի նյութերը հրատարակվել են գիտական հոդվածների ժողովածուի ձևաչափով:

Ինչ վերաբերում է «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի տվյալ ուղղությամբ կատարած աշխատանքներին, ապա նշեմ, որ ամբիոնի երեք աշխատակիցներ 'Ա. Պոտոսյանը, Վ. Գրիգորյանը, Ա. Ուլիխանյանը*** գիտական զեկույցով հանդես են եկել ԵՊՀ սոցիալ - տնտեսական աշխարհագրության ամբիոնի և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված հանրապետական գիտաժողովում:

Ֆակուլտետում գործող երկու մասնագիտական ամբիոնները ֆակուլտետի ՈՒԳԸ -ի հետ համատեղ յուրաքանչյուր տարի նախաձեռնել և անց են կացրել արդիական հիմնախնդիրների շրջանակներում գիտական զեկույցներ:

Ինչ վերաբերում է հանրային ներգրավման խնդրին ապա հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը այս ուղղությամբ ևս որոշակի աշխատանքներ է կատարել մասնավորապես.

Ֆակուլտետի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են ֆակուլտետի գովազդային լրատվական քարոզչական աշխատանքներին մասնաճյուղի կայքէջի միջոցով, ինչպես նաև ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման և ֆակուլտետի մասնագիտությունների ներկայացման աշխատանքներին, մասնակցել են նաև հանրային կարիքներին ուղղված տեղական տարածաշրջանային ծրագրերում: Ֆակուլտետի դասախոս Պ. Ասիլբեկյանը 2014թ. մասնակցել է «Հարավային Կովկասի երկրների համագործակցություն» ծրագրին, որը կազմակերպվել էր Գերմանիայի դաշնությունում: Ֆակուլտետի կոլեգիալ կառարվարման մարմնում պարտադիր ներգրավվում են նաև արտաքին շահակիցները:

Ինչ վերաբերում է որակյալ կադրային ներուժով ֆակուլտետի ապահովման խնդիրներին, ապա պետք է նշեմ, որ հաշվետու ժամանակաշրջանում այս առումով ևս զգալի աշխատանք են կատարվել:

- Դասախոսների որակավորման բարձրացման, մասնագիտական մակարդակի կատարելագործման նպատակով կազմակերպվել են դասընթացներ, որոնք ուղղված են եղել արդյունավետ և որակյալ ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

- Ֆակուլտետի դասախոսական կազմը համալրվել և համալրվում է մայր ԲՈՒՀ–ից հրավիրված բարձրորակ կադրերով:

Նշեմ նաև, որ հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման բնագավառում զգալի տեղաշարժեր են տեղի ունեցել. բարելավվել է ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական հենքը, մասնավորապես ամբողջությամբ վերանորոգվել և արդիականավցվել է լսարանային ֆոնդը, ապահովվել է ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործումը:

Վերջում նա նշեց, որ ֆակուլտետում աշխատանքները իրականացվել են բարձր պատասխանատվությամբ և պատշաճ կուլտուրայով օժտված աշխատակիցների միջոցով՝ սերտորեն համագործակցելով մասնաճյուղի մյուս բոլոր և՛ գծային, և՛ ֆունկցիոնալ ստորաբաժանումների հետ:

Արտահայտվեցին - Ս. Առաքելյանը, Գ. Հովհաննիսյանը և Գ. Միրոյանը

Նրանք բարձր գնահատեցին դեկանի կատարած հինգ տարիների աշխատանքը: Դա համապատասխանում է նաև ուսանողների հարցման արդյունքին, որը կազմում է 4,85 միավոր:

Որոշեցին - գերազնաց գնահատել դեկանի կատարած հինգ տարիների աշխատանքը:

Գիտխորհրդի նախագահ ***Ն. Խուդավերդյան***

Քարտուղար ***Ա. Սարիբեկյանը***